ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեպատիտ B-ի պատվաստանյութ՝

Ի՞նչ է ձեզ անհրաժեշտ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

Հեպատիտ B-ի պատվաստանյութը կարող է կանխարգելել **հեպատիտ B-ն**: Հեպատիտ B-ն լյարդի հիվանդություն է, որը կարող է մի քանի շաբաթ տևողությամբ մեղմ հիվանդություն առաջացնել, կամ կարող է հանգեցնել լուրջ, ցմահ հիվանդության:

- **Սուր հեպատիտ B-ի վարակը** կարճատև հիվանդություն է, որը կարող է հանգեցնել ջերմության, հոգնածության, ախորժակի կորստի, սրտխառնոցի, փսխման, դեղնախտի (մաշկի կամ աչքերի դեղին գույնի, մուգ մեզի, կավե գույնի կղանքի) և մկանների, հոդերի և ստամոքսի ցավի:
- **Քրոնիկ հեպատիտ B վիրուսային վարակը** երկարատև հիվանդություն է, որն ի հայտ է գալիս, երբ հեպատիտ B-ի վիրուսը մնում է մարդու մարմնի մեջ: Մարդկանց մեծ մասը, ում մոտ սկսում է զարգանալ քրոնիկ հեպատիտ B, ախտանիշներ չի ունենում, բայց հիվանդությունը միևնույն է՝ շատ լուրջ է և կարող է հանգեցնել լյարդի վնասման (ցիռոզ), լյարդի քաղցկեղի և մահվան: Քրոնիկ վարակված մարդիկ կարող են հեպատիտ B-ի վիրուսը փոխանցել այլ անձանց, նույնիսկ եթե նրանք իրենց հիվանդ չեն զգում կամ հիվանդ տեսք չեն ունենում:

Հեպատիտ B-ն տարածվում է, երբ հեպատիտ B-ի վիրուսով վարակված արյունը, սերմը կամ մարմնի այլ հեղուկներ մտնում են չվարակված մարդու մարմնի մեջ: Մարդիկ կարող են վարակվել հետևյալ կերպ.

- Ծնունդ (եթե հղին ունի հեպատիտ B, նրա երեխան կարող է վարակվել)
- Ածելիների կամ ատամի խոզանակների նման իրեր համատեղ օգտագործելը վարակված մարդկանց հետ
- Վարակված անձի արյան կամ բաց վերքերի հետ կոնտակտը
- Վարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն ունենալը
- Ասեղներ, ներարկիչներ կամ թմրանյութեր ներարկելու այլ սարքեր համատեղ օգտագործելը
- Ասեղի կամ այլ սուր գործիքների ծակոցից դուրս եկած արյան հետ շփման մեջ լինելը

Մարդկանց մեծամասնությունը, ովքեր պատվաստված են հեպատիտ B-ի պատվաստանյութով, ցմահ իմունիտետ ունեն:

2. Հեպատիտ B-ի պատվաստանյութ

Հեպատիտ B-ի պատվաստանյութ սովորաբար տրվում է որպես 2, 3 կամ 4 ներարկում:

Նորածինները պետք է հեպատիտ B-ի իրենց առաջին դեղաչափն ստանան ծնվելիս, և շարքը սովորաբար ավարտվում է 6-18 ամսեկանում: **Հեպատիտ B-ի պատվաստանյութի ծննդյան դեղաչափը նորածինների երկարատև հիվանդությունների և ԱՄՆ-ում հեպատիտ B-ի տարածման կանխարգելման կարևոր մասն է:**

Բոլոր երեխաները և դեռահասները, ովքեր 19 տարեկանից փոքր են և դեռևս պատվաստանյութ չեն ստացել, նույնպես պետք է պատվաստվեն:

Մեծահասակները, ովքեր նախկինում պատվաստված չեն եղել և ցանկանում են պաշտպանվել հեպատիտ B-ից, ևս կարող են պատվաստանյութ ստանալ:

Հեպատիտ B-ի պատվաստանյութը խորհուրդ է տրվում նաև հետևյալ անձանց համար.

- Մարդիկ, ում սեռական զուգընկերները հեպատիտ B ունեն
- Սեռապես ակտիվ անձնավորությունները, որոնք երկարատև մոնոգամ հարաբերություններ չունեն
- Մարդիկ, ովքեր սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների պատճառով դիմել են ստուգում կամ բուժում ստանալու համար
- Սեռական բռնության կամ ոտնձգության զոհ դարձած անձինք
- Տղամարդիկ, ովքեր սեռական կոնտակտներ ունեն այլ տղամարդկանց հետ
- Մարդիկ, ովքեր այլոց հետ համատեղ օգտագործում են ասեղներ, ներարկիչներ կամ թմրանյութեր ներարկելու այլ սարքեր
- Մարդիկ, ովքեր շփվում են հեպատիտ B-ի վիրուսով վարակված այլ անձի հետ
- Առողջապահության և հանրային անվտանգության աշխատակիցները, ովքեր արյան կամ մարմնի հեղուկների ազդեցության տակ գտնվելու ռիսկի տակ են
- Շարգացման թերություններ ունեցող մարդկանց համար նախատեսված հաստատությունների բնակիչները և աշխատակիցները
- Բանտում ապրողները
- Ճանապարհորդները, ովքեր ուղևորվում են հեպատիտ B-ի մեծ տարածում ունեցող շրջաններ

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

- Լյարդի քրոնիկ հիվանդություն, երիկամների հիվանդություն՝ դիալիզ ստացող, ՄԻԱՎ վարակ, հեպատիտ C-ի վարակ կամ շաքարախտ ունեցող մարդիկ

Հեպատիտ B-ի դեմ պատվաստանյութը կարող է տրվել որպես ինքնուրույն պատվաստանյութ կամ որպես համակցված պատվաստանյութի մաս (պատվաստանյութի մի տեսակ, որը միասին միավորում է մեկից ավելի պատվաստանյութեր մեկ պատվաստանյութում):

Հեպատիտ B-ի պատվաստանյութը կարելի է տալ այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

3. Խոսեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ

Ասեք ձեր պատվաստման հարցերով մատակարարին, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա հեպատիտ B-ի պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ**

Որոշ դեպքերում ձեր առողջապահական խնամքի մատակարարը կարող է որոշել հետաձգել հեպատիտ B-ի պատվաստումը մինչև հաջորդ այցը:

Հղի կամ կրծքով կերակրող կանայք պետք է պատվաստվեն, եթե հեպատիտ B-ով վարակվելու ռիսկի տակ են: Հղիությունը կամ կրծքով կերակրումը հեպատիտ B-ի դեմ պատվաստումից խուսափելու պատճառ չեն:

Թեթև հիվանդություններ, ինչպես, օրինակ՝ մրսածություն ունեցող անձինք, կարող են պատվաստվել: Մարդիկ, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, պետք է սովորաբար սպասեն մինչև ապաքինվելը՝ նախքան հեպատիտ B-ի պատվաստանյութ ստանալը:

Ձեր բժիշկը կարող է ձեզ հավելյալ տեղեկություններ տալ:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- Հեպատիտ B-ի դեմ պատվաստումից հետո կարող է ցավ առաջանալ ներարկման հատվածում կամ տենդ:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ եք զգում, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

5. Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե տեսնում եք լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և տարեք անձին մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների առկայության դեպքում զանգահարեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի ձեր առողջապահական խնամքի մատակարարը, կամ դա կարող եք ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ **www.vaers.hhs.gov**, կամ զանգահարեք **1-800-822-7967**: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:*

6. Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր-ը (National Vaccine Injury Compensation Program, VICP) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայքէջ՝ **www.hrsa.gov/vaccinecompensation** կամ զանգահարեք **1-800-338-2382**՝ տեղեկանալու ծրագրի և հայցի ներկայացման մասին:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Այցելեք Սննդամթերքի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ պատվաստանյութի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ **www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines**:
- Կապվեք հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
  - Զանգահարեք **1-800-232-4636** (**1-800-CDC-INFO**) կամ
  - Այցելեք CDC-ի կայքէջ՝ **www.cdc.gov/vaccines**:

Armenian translation provided by Immunize.org